ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

18.05.2020 թ.-18.08.2020 թ.նախարարության ժամանակակից արվեստի վարչության փորձագետի գործունեության վերաբերյալ

1. Մասնակցել եմ «ՀՀ կառավարության 2019 թվականիմայիսի 16-ի **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»** N650-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» կառավարության որոշման նախագծի պատրաստման գործընթացին՝ կինոարվեստի ոլորտում:
2. Վարչության իրավասության սահմաններում համակարգել եմ Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կինոարվեստի ոլորտի **2021-2023 թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագրերի և 2021 թվականի բյուջետային** հայտերի կազմման գործընթացը:
3. Իմ իրավասությունների սահմաններում մասնակցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով իրականացվող դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթային գործընթացներիի իրականացմանը:
4. Իմ իրավասությունների սահմաններում մասնակցել եմ Ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության շրջանակներում գենդերային զգայուն պետական բյուջեի նախագծի պատրաստման գործընթացին՝ կինոարվեստի ոլորտում:
5. Իմ իրավասության սահմաններում մասնակցել եմ կինոարվեստի ոլորտի ՊՈԱԿ-ների հետ կնքվող դրամաշնորհների **2020 թվականի պայմանագրերի բովանդակային** դրույթների կազմմանը:
6. Ուսումնասիրել և վերլուծել եմ **Կինոարվեստի ոլորտի ՊՈԱԿ-ների 2020 թվականի կիսամյակային** ստեղծագործական գործունեության հաշվետվությունները, կազմել դրանց վերաբերյալ համապատասխան եզրակացություններ:
7. Իմ իրավասությունների սահմաններում մասնակցել եմ **«Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիան (վերանայված) վավերացնելու մասին» ՀՀ օրենքի** նախագիծի քննարկմանը:

8. Իմ իրավասությունների սահմաններում մասնակցել եմ **«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կինո և տեսաֆիլմերի արտադրության և տարածման, ինչպես նաև տեսաֆիլմերի ցուցադրման հետ կապված ծառայությունների ոլորտներում վարչական համագործակցության մասին» Համաձայնագրի** քննարկմանը:
9. Մասնակցել եմ **Կինեմատոգրաֆիայի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի** նախագծի ուսումնասիրմանը և ներկայացրել առաջարկներ:
10. Մասնակցել եմ **«Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի** նախագծի ուսումնասիրմանը և ներկայացրել առաջարկներ:
11. Համակարգել եմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2020-2021 թթ օրացույցում ընդգրկված Անրի Վերնոյի ծննդյան 100-ամյա հոբելյանի շրջանակներում նախատեսվող միջոցառումների քննարկման նիստերը:
12. Համակարգել եմ «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» պետական ոչ առեվտրային կազմակերպությունը «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առեվտրային կազմակերպությանը միացման ձեվով վերակազմակերպելու եվ գույք ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման և շրջանառման գործընթացը:
13. Իմ իրավասությունների սահմաններում մասնակցել եմ Կինոնկարների նախագծերին պետական ֆինանսավորում հատկացնելու նպատակով Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ-ում անցկացվող 2020 թ-ի երկրորդ մրցութաշրջանին:
14. Հաշվետու ժամանակահատվածում ստացել եմ 138 մտից գրություն, կազմել և պատրաստել եմ 136 ելից գրություն, երկու տասնյակից ավելի զեկուցագրեր:
15. Մասնակցել եմ կինոգործիչների և շահագրգիռ կազմակերպությունների կողմից ստացված ոլորտային առաջարկների քննարկումներին, կազմել եզրակացություններ:
16. Նախարարության **կայքում** տեղադրելու համար՝ համակարգող նախարարի տեղակալին պարբերաբար ներկայացրել եմ կինոոլորտի ստեղծագործական ծրագրերի, միջոցառումների վերաբերյալ տեղեկույթներ:
17. Կատարել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության

Ժամանակակից արվեստի վարչության փորձագետ

Լուսինե Սարգսյան

25.08.2020 թ.